Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 353 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՎԵՐԵԼԱԿԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Իրականացնել վերելակի տեղադրման աշխատանքներ՝ ապահովելով Երևան քաղաքի «Արամ Խաչատրյան» համերգասրահի շենքում սահմանափակ կարողություն և հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Երևան քաղաք, բնագավառը՝ մշակութային
6.	Ծրագրի բյուջեն	14,706,833 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի «Արամ Խաչատրյան» համերգասրահ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2022 թ. մայիսի 6-ից մինչև 2022 թ. օգոստոսի 15-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ժամկետում նախատեսվում է կառուցել վերելակի հորանը և տեղադրել վերելակ՝ 14,706,833 դրամ, ժամկետները՝ 2022 թ. մայիսի 6-ից մինչև 2022 թ. օգոստոսի 15-ը: Վերելակը տրամադրվում է կապալառուին «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Երևան քաղաքի «Արամ Խաչատրյան» համերգասրահի շենքում սահմանափակ կարողություն և հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժն ապահովելու նպատակով վերելակի հորանի կառուցում և «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից տրամադրված վերելակի տեղադրում՝ 14,706,833 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

18.05.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ